

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՖԿՍՊ-Ի ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա.Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
«_____» _____2018թ.

ՀԱՐՑԱՇԱՐ

«Սպորտ և մարզիկների պատրաստության համակարգ» (Փրկարարական գործ)
կրթական ուղղության 2018-2019 ուս. տարվա ընդունելության քննության

1. Սեյսմիկ վտանգի կանխատեսումը, գնահատումը և հետևանքների ուսումնասիրումը:
2. Որոնողափրկարարական աշխատանքները փլատակներում:
3. Բնածին և տեխնածին աղետների դեպքում որոնող շների աշխատանքի հիմնական պայմանները:
4. Մարզման օրինաչափությունների կիրառումը փրկարարների պրոֆեսիոնալ պատրաստության գործընթացում:
5. Այրվածքների տեսակները, ծանրությունը պայմանավորող գործոնները, առաջին օգնությունը:
6. Վիրակապերի տեսակները, վիրակապման նպատակները, հիմնական սկզբունքները:
7. Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը ձմռանը և գիշերային պայմաններում:
8. Փրկարարի շարժողական ընդունակությունները և նրանց մշակման մեթոդիկան:
9. Փրկարարի շուրջտարյա մարզման առանձնահատկությունները, մեթոդներն ու միջոցները:
10. Փրկարարական աշխատանքների ղեկավարման սկզբունքները և գործելու հերթականությունը:
11. Որոնողափրկարարական աշխատանքները ավտոտրանսպորտային վթարների ժամանակ:
12. Փրկարարի տեղագրական պատրաստությունը՝ տեղագրական քարտեզներ, կողմ-նորոշման եղանակներ:
13. Որոնողափրկարարական աշխատանքներում վարժեցրած շների օգտագործումը և նրանց որակավորմանը ներկայացվող պահանջները:
14. Որոնողափրկարարական աշխատանքները ջրային տարածքներում:
15. Իրական և մագնիսական ազիմուտ: Մագնիսական սլաքի խոտորման աստիճանի հաշվառումը ազիմուտով շարժման ընթացքում:
16. Որոնողափրկարարական աշխատանքները լեռնային պայմաններում:

17. Ոսկրամկանային համակարգի վնասվածքների նշանները, առաջին օգնությունը:
18. 20-րդ դարի կործանիչ երկրաշարժերը և միջազգային փոխօգնությունը:
19. Փրկարարի գործունեության հուսալիության հոգեբանական մեխանիզմները:
20. Հյուսվածքների երկարատև ճզմվածության համախտանիշ նշանները, առաջին օգնությունը:
21. Շոկի պատճառները, նշանները, առաջին օգնությունը:
22. Փրկարարական ժամանակակից տեխնիկական միջոցների և սարքավորումների բնութագրումը:
23. Արտակարգ իրավիճակների աճի դինամիկան աշխարհում և Հայաստանում:
24. Որոնողափրկարարական աշխատանքները ջրհեղեղների ու սողանքների դեպքում:
25. Ինչպես նախապատրաստվել երկրաշարժին: Ինչ անել ցնցումից առաջ, ցնցումների ժամանակ և երկրաշարժից հետո:
26. Մարդ-բնություն փոխհարաբերությունը որպես տարերային աղետների առաջացման պատճառ:
27. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և օպերատիվ գործողությունների համակարգը:
28. Փրկարարի բազային և անընդմեջ ուսուցումը:
29. Երկրակեղևի սալերի տեկտոնիկական և սեյսմիկ վտանգի կանխատեսման նախա-նշաններն ու գնահատումը:
30. Միջազգային փրկարարական աշխատանքները Սպիտակ-88-ի ժամանակ և Հայաստանի փրկարարների միջազգային կապերը:
31. Կողմնորոշում տեղանքում կողմնացույցով և տեղանքի առարկաների միջոցով:
32. Երկրաշարժերը և նրանց առաջացման պատճառները: Երկրաշարժի օջախ, հիպոկենտրոն, վերնակենտրոն հասկացությունները:
33. Փրկարարի աշխատանքային բեռնվածության առանձնահատկությունները և կարգավորումը:
34. Առաջին օգնությունը շնչուղիների մասնակի և լրիվ խցանումով չափահաս տուժածին և ծծկեր երեխային:
35. Արտակարգ իրավիճակների գոտու հետախուզումը և որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը:
36. Փրկարարի պատրաստությանը ներկայացվող ատեստավորման պահանջները:
37. Փրկարարի ուսուցման համակարգը, սկզբունքները, փուլերն ու մեթոդները:
38. Փափուկ հյուսվածքների վնասվածքների տեսակները, առաջին օգնությունը:
39. Փրկարարի պատրաստության և գործունեության հոգեբանական յուրահատկությունները:
40. Ճգնաժամային կառավարման մեխանիզմները և կարիքների վերահսկումը:
41. Աղետ հասկացությունը և դասակարգումը ըստ ծագման բնույթի և առաջացման պատճառների:
42. Փրկարարի ուսուցման առանձնահատկությունները, սխալների առաջացման պատճառները, բացահայտումը և վերացումը:
43. Փրկարարի հոգեբանական պատրաստության նպատակը և խնդիրները:

44. Դժվարացած շնչառություն և բրոնխիալ ասթմայի նոպա, նշանները, առաջին օգնությունը:
45. Փրկարարի պաշտպանության անհատական միջոցները և նրանց բնութագրումը:
46. Առաջին օգնությունը օծերի, կարիճների և միջատների խայթելու դեպքում:
47. Արտաքին և ներքին արյունահոսություն, նշանները, առաջին օգնությունը:
48. Փրկարարի կարգավիճակը, պարտականությունները, իրավունքներն ու պատասխանատվությունը:
49. Կապի տեսակները և նրանց բնութագրումը:
50. Երկրաշարժի մագնիտոդայի չափման միավորները: Մագնիտոդայի կապը օջախի խորության և հիմնատակի ապարների հետ:
51. Միջազգային փրկարարական կառույցներ, համագործակցություն և փոխօգնություն:
52. Աղետյալի հոգեբանական վիճակների ախտորոշումն ու կարգավորումը:
53. Լեռնափրկարարի պատրաստությանը ներկայացվող պահանջներն ու գործունեության առանձնահատկությունները:
54. Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգը և չափանիշները:
55. Փրկարարի էթիկան և վարքի դրսևորումը փրկարարական աշխատանքների ժամանակ:
56. Հրատապ գործողությունների փուլեր: Դեպքի վայրի և տուժածի գնում: Ահազանգ:
57. Արևահարություն, ցրտահարում, կաթված, նշանները, առաջին օգնությունը:
58. Հնարավոր աղետները Հայաստանում, նրանց կանխատեսումը և կանխարգելումը: Երևան քաղաքին սպառնացող աղետները:
59. Փրկարարի ընդհանուր և հատուկ պատրաստության առանձնահատկությունները և գնահատման չափանիշները:
60. Հերթապահություն և փրկարարների մեկնումը որոնողափրկարարական աշխատանքների գոտի:
61. Աղետի ազդարարումը և կապի կազմակերպումը աղետի գոտում:
62. Բնատեխնածին հրդեհների առաջացման և տարածման պատճառները: Մարման ժամանակակից միջոցները:
63. Աղետներին դիմակայելու բնակչության պատրաստականության վարքականոնների իմացությունը՝ որպես աղետի հետևանքների նվազեցման նախապայման:
64. Փրկարարի բեռնվաճառության և աշխատունակության վերահսկումը և վերականգնումը:
65. Աղետները որպես հրդեհների առաջացման պատճառ: Սպիտակի երկրաշարժը և հրդեհների անխուսափելիությունը:
66. Երկրագնդի սեյսմոակտիվ գոտիները: Հայաստանի սեյսմիկ շրջանացումը որպես սեյսմովտանգավոր գոտի:
67. Փրկարարի գործունեության իրավական հիմքերը:
68. Հատուկ վարժեցրած շների անհրաժեշտությունը որոնողափրկարարական աշխատանքներում և նրանց աշխատանքին խանգարող գործոնները:
69. Հրդեհների բնութագրումը, տեսակներն ու վտանգավոր գործոնները: Փրկարարի հակահրդեհային համազգեստն ու սարքավորումները:

70. Աղետյալի և փրկարարի անվտանգության ապահովումը փրկարարական աշխատանքների ժամանակ: Փրկարարի անհատական պաշտպանության միջոցները:
71. Փրկարարի տակտիկական պատրաստությունը: Անհատական և խմբակային տակտիկական պատրաստություն:
72. Հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը և հրդեհամարման աշխատանքների առանձնահատկությունները տարբեր օբյեկտներում:
73. Առաջնահերթ միջոցառումների կազմակերպումը աղետի գոտում:
74. Տուժածի արտաշրջափակումը, տեղափոխման եղանակի ընտրությունը և հերթականությունը:
75. Միջին լեռնային շրջաններում սպասվող տարերային աղետները և փրկարարական աշխատանքների առանձնահատկությունները: